ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«Հաստատում եմ»
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
Ռ. Սարգսյան
«12» 09.2024թ.

ԿԱՐԳ
«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջում (այսուհետ՝ Քոլեջ կամ Հաստատություն) հիմնական ընդհանուր կրթությամբ առաջին կուրսից փոխադրվում են հաջորդ կուրս պետական ավարտական քննություններ հանձնելով:

2. Քննությունները սկսվում են առավոտյան ժամը 10.00-ին: Ուսանողները Քոլեջ են ներկայանում ժամը 9.00-ին:

3. Քննությունների միջև ընկած օրերին դասախոսները ուսանողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Քոլեջի տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

4. Պետական ավարտական քննություններն անցկացվում են.

1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ գրավոր: Քննությանը տրվում է 120 րոպե:

2) «Հայոց պատմություն» առարկայից՝ գրավոր: Քննությանը տրվում է 120 րոպե:

3) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր, քննությանը տրվում է 120 րոպե: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ (մտավոր հետամնացություն) ունեցող

ուսանողների քննության կազմակերպումը կատարվում է անհատական ուսուցման պլանով (ԱՈՒՊ) իրականացված գնահատման հիման վրա:

4) «Ֆիզկուլտուրա» առարկայից՝ ամփոփիչ ստուգարք (նորմատիվների հանձնում):

5. Քննական առաջադրանքները (առնվազն 2 տարբերակ) կազմում է Քոլեջի հանրակրթական առարկայական հանձնաժողովն՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների: Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից:

6. Գրավոր աշխատանքը գնահատվում է 20 միավորային համակարգով:

7. Քննական գրավոր աշխատանքները, մինչև դրանց ստուգման ավարտը, պահպանվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում:

8. Պետական ավարտական քննությունները կազմակերպվում են ավարտական քննական սենյակում: Քննությունների կազմակերպման, անցկացման և գնահատման համար հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով (կազմակերպչական և ստուգող): Կազմակերպչական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տնօրենը կամ նրա նշանակած դասախոսը (հանձնաժողովի նախագահ), քննության ընթացքի պատասխանատու և կազմակերպիչ, ովքեր տվյալ քննական առարկայի մասնագետներ չեն: Ստուգող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տնօրենը կամ նրա նշանակած դասախոսը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի դասախոսը (ստուգող դասախոս) և հարակից առարկայի մասնագետ:

9. Ուսանողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական հանձնաժողովի նախագահի հրահանգով: Ուսանողները քննասենյակում տեղավորվում են վիճակահանության միջոցով:

10. Ուսանողը քննություններին ներկայանում է ստուգման գրքույկով:

11. Քննությունը սկսվելուց առնվազն կես ժամ առաջ քննական հանձնաժողովի նախագահը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի առաջադրանքներից:

12. Ավարտական քննություններին ուսանողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ձեռնարկներ:

13. Ուսանողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո, քննական հանձնաժողովի նախագահը քննասենյակ է բերում քննական առաջադրանքների ծրարները: Քննասենյակի պատասխանատուն (կազմակերպիչը) սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են առաջա-դրանքները: Առաջադրանքների վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում է քննության սկզբը և ավարտը:

14. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում, քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ:

15. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող առաջադրանքները փոխարինվում են նորով:

16. Քննության ավարտից 20 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն ուսանողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանք-ների պատասխանները համապատասխան ձևաթղթերի վրա անցկաց-նելու մասին:

17. Ուսանողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախազգուշացված ուսանողին, քննական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից: Հեռացված ուսանողը գնահատվում է չգնահատված:

18. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին ուսանողը հանձնում է իր առաջադրանքը: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակեր-պիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:

19. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած ուսանողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

20. Պատասխանատուն առաջադրանքները և ուսանողների լրացված ձևաթղթերը հանձնում է քննական քննական հանձնաժողովի նախագահին:

21. Քննական առաջադրանքները ստուգվում են տնօրենի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 13:00-ին: Ստուգող հանձնա-

ժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է: Ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

22. Քննական արդյունքները գնահատելիս, քննական հանձնաժողովի անդամ-ների միջև տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Քվեարկության արդյունքներում ստացված հավասար ձայների դեպքում վճռորոշ է քննական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը:

23. Քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 13:00-ին: Քննական հանձնաժողովի նախագահը ցուցակների կրկնօրինակը փակցնում է հաստատության մուտքի մոտ:

24. Քննությունների արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Գրավոր քննության բողոքի արդյունքները, ոչ ուշ քան դիմումը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում է դիմողին:

25. Անբավարար գնահատված ուսանողները տվյալ առարկայի քննությունը հանձնում են քոլեջի բոլոր ուսանողների համար նախատեսված վերաքննական շրջանում:

Հավելված 1

«Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից

պետական ավարտական քննությունների արդյունքների գնահատման սանդղակ

Նախնական միավորը **(0-50)**	Միավորը **20** միավորանոց համակարգում
49-50	20
46-47-48	19
43-44-45	18
40-41-42	17
37-38-39	16
34-35-36	15
31-32-33	14
28-29-30	13
25-26-27	12
22-23-24	11
19-20-21	10
16-17-18	9
14-15	8
12-13	7
10-11	6
8-9	5
6-7	4

4-5	3
2-3	2
1	1
0	0